# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԲԸԱՀԾՁԲ-10-2 ծածկագրով հայտարարված առանց հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի արդյունքում 2015թ. մարտի 19-ին կնքված № ԲԸԱՀԾՁԲ-10-2-6 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2015թ. օգոստոսի 28-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

***Փոփոխության պատճառ:*** Պայմանգրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշել են Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցում կատարել փոփոխություն:

***Փոփոխության նկարագրություն:*** Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին գնման ժամանակացույցում ներառված ջրամատակարարման, ջրահեռացման ծառայությունների մի մասի մատուցման ժամկետները 3-րդ եռամսյակից տեղափոխել 4-րդ եռամսյակ, իսկ վճարման ժամանակացույցում վճարման ենթակա համապատասխան գումարների վճարումը 3-րդ եռամսյակից տեղափոխել 4-րդ եռամսյակ:

***Փոփոխության հիմնավորում:*** Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 7.2 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշման 71-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ: ***Ընդունել ի գիտություն, որ փոփոխության ենթակա պայմանագրով նախատեսված ծառայությունների գնման գործընթացը սկսվել է մինչև ՀՀ կառավարության 30.01.2015 թվականի N 105-Ն որոշման ուժի մեջ մտնելը:***

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության ԱԾԳՓՁ բաժնի պետ Գ. Թովմասյանին:

**Հեռախոս՝** 010-29-44-99:

**Էլ. փոստ՝** g.tovmasyan@mil.am

**Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:**

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ (ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ) № 1**
**№ ԲԸԱՀԾՁԲ-10-2-6 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **28 -ը օգոստոսի 2015թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից և Շիրակի մարզի «Աղին» համայնքն՝ ի դեմս համայնքի ղեկավար Մ. Թովմասյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 19.03.2015թ. կնքված № ԲԸԱՀԾՁԲ-10-2-6 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.2 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

**1. Փոփոխության առարկան**

Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի.

ա) գնման ժամանակացույցում ներառված ջրամատակարարման, ջրահեռացման ծառայությունների մի մասի մատուցման ժամկետները 3-րդ եռամսյակից տեղափոխել 4-րդ եռամսյակ՝ Հավելված № 1,

բ) վճարման ժամանակացույցում վճարման ենթակա համապատասխան գումարների վճարումը 3-րդ եռամսյակից տեղափոխել 4-րդ եռամսյակ՝ Հավելված № 2:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | Շիրակի մարզի «Աղին» համայնք |
| ք. Երևան, Բագրևանդի 5 | Մարալիկի գյուղապետական բաժանմունք |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Աղին այլ մուտքեր |
| ՀՀ 900011144079 | Հ/Հ 900495117096 |
| ՀՎՀՀ 02703824 | ՀՎՀՀ 06000727 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ | Համայնքի ղեկավար |
| Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ | Մ. ԹՈՎՄԱՍՅԱՆ |

| Ծառայության անվանում | Ըստ պայմանագիր | | | | | | Առաջարկվող փոփոխությամբ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Չ/մ | Ըստ եռամսյակներ | | | | Ընդամենը | Ըստ եռամսյակներ | | | | Ընդամենը |
| | | I | II | III | IV /ոչ ուշ քան 20.12.15թ./ | | I | II | III | IV /ոչ ուշ քան 20.12.15թ./ | |
| Խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ ըստ բաժանորդ ՀՀ ՊՆ զորամասերի ցանկի | խոր.մ | 500 | 500 | 500 | 500 | 2000 | 500 | 500 | 667 | 333 | 2000 |

Հավելված № 2

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 2015Թ.

| Ծառայության անվանում | Ըստ պայմանագիր | | | | | | Առաջարկվող փոփոխությամբ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորի սակագինը (դրամ) | Գումարը (դրամ) | | | | Ընդամենը | Գումարը (դրամ) | | | | Ընդամենը |
| | | I | II | III | IV /ոչ ուշ քան 25.12.15թ./ | | I | II | III | IV /ոչ ուշ քան 25.12.15թ./ | |
| Խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ ըստ բաժանորդ ՀՀ ՊՆ զորամասերի ցանկի | 180 | 60 000 | 150 000 | 210 000 | 360 000 | 360 000 | 60 000 | 150 000 | 280000 | 360000 | 360000 |

Ծանոթություն՝ Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տնտեսական
ՆՏԱ դեպարտամենտի պետ
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
Շիրակի մարզի «Արթիկ» համայնք
Համայնքի ղեկավար
Մ. ԹՈՎՄԱՍՅԱՆ